



California's Protection & Advocacy System

## **Հալածանքը և հետապնդումը հաշմանդամություն ունեցող աշակերտների նկատմամբ**

---

*Հրապ. #5512.01 – Հոկտեմբեր, 2020թ.*

Այս հրապարակումն ամփոփ ներկայացնում է հաշմանդամություն ունեցող աշակերտների նկատմամբ կիրառվող հալածանքն ու հետապնդումը: Հրապարակման մեջ.

- Բացատրվում է հալածանքի ու հետապնդման նշանակությունը
- Բացատրվում են դպրոցական շրջանների՝ հալածանքի ու հետապնդման մասին օրենքով սահմանված պարտավորությունները և
- Ներկայացվում են IEP գործընթացի և այլ ընթացակարգերի միջոցով հալածանքի ու հետապնդման խնդիրը վերացնելու հնարավոր ուղիները:

### **1. Ի՞նչ է հալածանքը**

Հալածանքն անցանկալի վարք է, որի դեպքում մի անձն ավելի մեծ ուժ ունի, քան մյուսը: Ուժերի անհավասարակշռություն կարող է իրականում լինել, կամ կարող է թվալ, որ այդպես է: Անհավասարակշռություն առաջացնող ուժի ձևերի օրինակներ են ֆիզիկական ուժը, որևէ մեկի մասին ինչ-որ անհարմար բան իմանալը կամ հայտնիությունը: Վատաբարո անձը կարող է օգտագործել ուժի այս ձևերը ուրիշներին վերահսկելու կամ վնասելու համար: Անցանկալի վարքը կրկնվում է կամ կարող է կրկնվել:<sup>1</sup> Հալածանքը դրսևորվում է շատ ձևերով, մասնավորապես՝

---

<sup>1</sup> <https://www.stopbullying.gov/bullying/what-is-bullying>

- Հալածանք խոսքի տեսքով, որը ենթադրում է վարկաբեկող խոսքեր ասելը կամ գրելը և կարող է արտահայտվել ծաղրանքի, անձի պիտակավորման կամ սպառնալիքի հնչեցման ձևով
- Ֆիզիկական հալածանք, որն այլ անձի մարմնին կամ իրերին վնաս հասցնելն է և կարող է արտահայտվել հարվածելու, ոտք գցելու, ոտքով հարվածելու, թքելու, հրելու կամ մեկի իրերը վերցնելու և կոտրելու ձևով
- Սոցիալական հալածանք, որը մեկի հեղինակությանը կամ հարաբերություններին վնաս հասցնելն է: Դա կարող է արտահայտվել բամբասանքներ տարածելու, մեկին միտումնավոր անտեսելու, դրամ կամ գույք պահանջելու կամ մեկին վախեցնելու կամ սպառնալու ձևով
- Կիբեռհալածանքը հալածանքի այնպիսի ձև է, որն իրականացվում է բջջային հեռախոսների, համակարգիչների կամ համացանցի միջոցով: Այն կարող է արտահայտվել «մեկի մասին վնասաբեր, ոչ ճիշտ կամ վարկաբեկող բովանդակությունն ուղարկելու, հրապարակելու կամ տարածելու» ձևով:<sup>2</sup>

Օրենքը տալիս է հետևյալ սահմանումը. հալածանքը մի աշակերտի կողմից մեկ այլ աշակերտին ուղղված բառերը կամ գործողություններն են: Հալածանք լինելու համար տվյալ վարքի արդյունքները կամ հնարավոր արդյունքները հետևյալն են.

- Վախ մարմնին կամ գույքին հասցվող վնասից,
- Բացասական ազդեցություններ ֆիզիկական կամ հոգեկան առողջության վրա,
- Ազդեցություններ դպրոցի առաջադիմության վրա և
- Ազդեցություններ ուսումնառությանը և դպրոցի ծառայություններին մասնակցելու վրա:<sup>3</sup>

## **2. Ի՞նչ է հաշմանդամության հետապնդումը**

Հաշմանդամության հետապնդում է համարվում

<sup>2</sup> <https://www.stopbullying.gov/cyberbullying/what-is-it>

<sup>3</sup> Cal. Ed. Code Secs. 32261(f), 48900(r)(1).

հաշմանդամության հիմքով աշակերտի նկատմամբ «ահաբեկող կամ վիրավորական պահվածք» դրսևորելը:<sup>4</sup> Հաշմանդամության հետապնդումը կարող է տեղի ունենալ շատ տարբեր ձևերով: Այն կարող է տեղի ունենալ բառեր հնչեցնելու և անձի պիտակավորման, գրավոր հայտարարությունների կամ ֆիզիկական գործողությունների տեսքով:<sup>5</sup> Պարտադիր չէ, որ հաշմանդամության հետապնդումն ուղղված լինի որևէ կոնկրետ անձի, տեղի ունենա անընդհատ և միտումնավոր վնաս պատճառի:<sup>6</sup> Հաշմանդամության հետապնդումը կարող է իրականացվել այլ աշակերտների, ինչպես նաև դպրոցի աշխատակիցների, օրինակ, ուսուցիչների և աշխատակազմի աշխատակիցների կողմից: Հալածանքը նույնպես կարող է հետապնդում համարվել, եթե այն կատարվում է աշակերտի հաշմանդամության հիմքով:

Երբ հետապնդման հետևանքով հաշմանդամություն ունեցող աշակերտը դադարում է սովորել կամ մասնակցել դպրոցական միջոցառումներին, ինչպես նաև կաներ դա նորմալ պայմաններում, այդ միջավայրը կոչվում է «անբարյացակամ միջավայր ուսման համար»: Հաշմանդամության հետապնդումը կարող է ուսման համար անբարյացակամ միջավայր ստեղծել: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ հետապնդումը այնչափ լուրջ է, տարածված և կրկնվող, որ հաշմանդամություն ունեցող աշակերտներին թույլ չի տալիս մասնակցել դպրոցի գործունեությանը կամ օգուտ ստանալ դպրոցի գործունեությունից կամ ծառայություններից:<sup>7</sup>

### **3. Ինչպե՞ս իմանամ՝ արդյոք իմ երեխային հալածել կամ հետապնդել են**

Ուշադրություն դարձրեք երեխային և նրա վարքագծի, տրամադրության կամ արտաքին տեսքի բոլոր փոփոխություններին, ինչպիսիք են.

---

<sup>4</sup> Dear Colleague Letter, July 25, 2000, հղում՝

<https://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/disabharassltr.html>

<sup>5</sup> Dear Colleague Letter, October 26, 2010, հղում՝

<https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201010.html>

<sup>6</sup> Dear Colleague Letter, October 26, 2010, հղում՝

<https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201010.html>

<sup>7</sup> Dear Colleague Letter, October 26, 2010, հղում՝

<https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201010.html>

- ուսուցիչը կամ քննիչը փոփոխությունները,
- դպրոցի գնահատականների ու առաջադիմության վատացումը,
- դպրոցից խուսափելը, դասերը բաց թողնելը, դպրոցից ուշանալը կամ դպրոցը չհավանելը,
- վնասվածքները, օրինակ, կտրվածքները, կապտուկները կամ պատռված հագուստը և (կամ)
- ընկճվածությունը, անհանգստությունը, միայնությունը կամ ցածր ինքնագնահատականը:

Հաշմանդամություն ունեցող աշակերտները երբեմն չգիտեն, որ իրենց հալածում կամ հետապնդում են: Կարևոր է, որ ծնողները խոսեն իրենց երեխայի հետ և հարցնեն նրան այլ աշակերտների հետ ունեցած նրա հարաբերությունների մասին: Որոշ երեխաներ գուցե չհասկանան, որ հալածվելը կամ հետապնդվելը վնասակար է: Նրանք գուցե չկարողանան ասել մեծահասակին, որ իրենց հալածում կամ հետապնդում են:<sup>8</sup> Այդ պատճառով կարևոր է դպրոցին տեղեկացնել հալածանք կամ հետապնդում թվացող բոլոր նշանների մասին:

### **3. Ո՞ր օրենքներով է կարգավորվում հալածումը և հաշմանդամության հետապնդումը դպրոցում**

Հալածումը և հաշմանդամության հետապնդումը կարող է հաշմանդամության խտրականության ձև լինել, ինչն անօրինական է: Դաշնային օրենքներով դպրոցներից պահանջվում է կրթության հավասար հնարավորություն ապահովել բոլոր, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող աշակերտների համար:<sup>9</sup>

1973թ. ընդունված Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման մասին օրենքի Բաժին 504-ով (այսուհետ՝ «Բաժին 504») արգելվում է հաշմանդամության հիմքով խտրականությունը, ինչը կիրառելի է դաշնային ֆինանսավորում ստացող բոլոր դպրոցների համար:<sup>10</sup> 1990թ. ընդունված Հաշմանդամություն ունեցող ԱՄՆ քաղաքացիների իրավունքների պաշտպանության

<sup>8</sup> Dear Colleague Letter, August 20, 2013, հղում՝ <https://www2.ed.gov/policy/speced/guid/idea/memosdcltrs/bullyingdcl-8-20-13.pdf>:

<sup>9</sup> Dear Colleague Letter, July 25, 2000, հղում՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/disabharassltr.html>:

<sup>10</sup> Dear Colleague Letter, July 25, 2000, հղում՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/disabharassltr.html>:

մասին օրենքի Չատված II-ով (այսուհետ՝ «Չատված II») նույնպես արգելվում է հաշմանդամության հիմքով խտրականությունը, սակայն արգելքը կիրառելի է նահանգային և տեղական բոլոր կազմակերպությունների համար՝ անկախ դաշնային ֆինանսավորում ստանալուց:<sup>11</sup> Չալածանքը և հաշմանդամության հետապնդումը կարող է լինել խտրականության այնպիսի ձև, որը խախտում է և՛ Բաժին 504-ի, և՛ Չատված II-ի պահանջները:<sup>12</sup> Չետապնդումը կարող է խախտել նաև քաղաքացիական այլ իրավունքներ, երեխաների բռնության մասին օրենքները և քրեական օրենսդրությունը:

Կալիֆորնիայի հանրային դպրոցները պարտավոր են հավասար կրթական հնարավորություն ապահովել բոլոր աշակերտների համար:<sup>13</sup> Աշակերտներն իրավունք ունեն «հաճախելու դասերին դպրոցի անվտանգ, ապահով և խաղաղ միջավայր առաջարկող կամպուսներում»:<sup>14</sup> Հանրային դպրոցների աշակերտներն իրավունք ունեն չենթարկվելու խտրականության կամ հետապնդման:<sup>15</sup> Դպրոցում հաշմանդամության հիմքով հետապնդումը վտանգում է հավասար կրթական հնարավորության այս իրավունքը:<sup>16</sup>

### **a. Անվճար և պատշաճ հանրային կրթություն (FAPE)**

Դպրոցները պետք է ապահովեն անվճար և պատշաճ հանրային կրթություն («FAPE») հաշմանդամություն ունեցող այն աշակերտների համար, որոնք ունեն Անհատականացված կրթական ծրագիր (անգլ. Individualized Education Program, IEP) կամ 504 պլանը:<sup>17</sup> Դպրոցները պարտավոր են անցկացնել IEP հանդիպում՝

---

<sup>11</sup> Dear Colleague Letter, July 25, 2000, հղում՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/disabharassltr.html>

<sup>12</sup> Dear Colleague Letter, July 25, 2000, հղում՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/disabharassltr.html>:

<sup>13</sup> Cal. Ed. Code Sections 201(a)-(c).

<sup>14</sup> Cal. Ed. Code Section 33261(a).

<sup>15</sup> Cal. Ed. Code Sections 201(a)-(c).

<sup>16</sup> Cal. Ed. Code Sections 201(a)-(c).

<sup>17</sup> Dear Colleague Letter, October 21, 2014, հղում՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-bullying-201410.pdf>:

պարզելու, թե հալածանքն ինչ ազդեցություն է ունենում աշակերտի վրա: Եթե աշակերտին մատուցվող ծառայությունները հալածանքի արդյունքում տուժում են, ապա դպրոցը պետք է շտկի իրավիճակը: Դպրոցը պետք է հավաստիանա, որ աշակերտը զրկված չէ իր տրամադրած կրթությունից:<sup>18</sup> Հաշմանդամության խտրականությունը, որից տուժում է հաշմանդամություն ունեցող աշակերտի ուսումնառությունը, կարող է զրկել տվյալ աշակերտին անվճար և պատշաճ հանրային կրթություն (FAPE) ստանալուց: Դատելի է ունենում այն պատճառով, որ դպրոցի տրամադրած կրթությունից աշակերտի օգուտ ստանալու կարողությունը նվազել է:<sup>19</sup>

### **i. Ծնողներն ինչպե՞ս կարող են վերացնել հալածանքը IEP գործընթացի օգնությամբ**

Եթե ծնողները կարծում են, որ հաշմանդամություն ունեցող իրենց երեխան դպրոցում հալածանքի է ենթարկվում, պետք է անմիջապես հայտնեն դպրոցին այդ մասին: Ծնողները գուցե նաև ցանկանան IEP հանդիպում պահանջել: IEP հանդիպումը հարմար է դպրոցի աշխատակազմի հետ հալածանքի վերաբերյալ ունեցած մտահոգությունների մասին խոսելու համար:

Եթե ծնողները կարծում են, որ հալածանքը կարող է բացասական ազդեցություն ունենալ իրենց երեխայի կամ դպրոցում նրա ունեցած առաջադիմության վրա, նրանք կարող են նաև գնահատման գրավոր դիմում ներկայացնել: Ծնողները կարող են պահանջել, որ անցկացվի իրենց երեխայի հոգեկան և հուզական ինքնազգացողության գնահատումը: Այս գնահատումը կարող է օգնել ծնողներին և IEP թիմին գտնել այն ճիշտ ծառայությունները, որոնք կնպաստեն երեխայի և նրա կրթության վրա հալածանքի ազդեցության վերացմանը:

IEP հանդիպմանը կարևոր է քննարկել այն հարցը, որ հալածանքը վնասում է երեխայի ուսմանը դպրոցում: Անվճար և

---

<sup>18</sup> Dear Colleague Letter, October 21, 2014, հղում՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-bullying-201410.pdf>:

<sup>19</sup> Dear Colleague Letter, July 25, 2000, հղում՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/disabharassltr.html>:

պատշաճ հանրային կրթություն (FAPE) ստանալու համար աշակերտի հալածանքի խնդիրը պետք է լուծվի IEP հանդիպման ընթացքում:

Կան բազմաթիվ նպատակներ, հարմարություններ և ծառայություններ, որոնք կարելի է ներառել աշակերտի IEP-ում՝ հալածանքը վերացնելու համար: Ահա IEP նպատակների և միջամտությունների մի քանի օրինակ, որոնք կարող են վերացնել հալածանքի հետ կապված խնդիրները.

**Սոցիալական հմտությունների զարգացում:** Աշակերտը կարող է իմանալ համապատասխան սոցիալական շփման մասին և սովորել ասել, թե ինչ է հալածանքը:

**Դրական հարաբերությունների ձևավորում:** Աշակերտները, որոնք ունակ են դրական հարաբերություններ ձևավորելու և ընկերություն անելու, ավելի հավանական է, որ վստահություն ձեռք կբերեն: Այդ դեպքում հնարավոր է, որ նրանք հալածանքը կառավարելու համար ավելի շատ գործիքներ ունենան:

**Սեփական շահերի պաշտպանության հմտությունների զարգացում:** Երեխաները կարող են սովորել՝ ինչպես համապատասխանորեն արձագանքել հալածանքին: Դա ներառում է՝ ինչպես և երբ հայտնելը մեծահասանկերին այդ մասին, ասելը «Դադարեցրու» կամ հեռանալը սթրեսային իրավիճակներից:

**Հսկողություն կամ առանձնացում վատաբարո աշակերտներից:** IEP-ում կարելի է պլանավորել, որ դպրոցի անձնակազմը հսկի կամ հետևի աշակերտին կամ նրան զերծ պահի վատաբարո աշակերտներից: Օրինակ՝ ավտոբուսի միջանցքները կամ հետևամասը կարող են լինել այն վայրերը, որտեղ տեղի է ունենում հալածանքը: Սակայն պետք է ուշադիր լինել, որ այս միջոցառումները «չպատժեն» հալածանքի ենթարկվող երեխային: Նրան պետք չէ պահել խիստ սահմանափակ միջավայրում կամ զրկել հասակակիցների հետ դրական շփում ունենալու հնարավորություններից:

**Խորհրդատվություն կամ աջակցող ծառայություններ:** Սա կարող է լինել խորհրդատվություն կամ ոչ պաշտոնական

հարցումներ ուսուցչի, դպրոցի հոգեբանի կամ տնօրենի հետ, որոնց կարող է դիմել աշակերտը հալածանքի ենթարկվելիս:

**Ծնողի խորհրդատվություն և ուսուցում:** Ծնողի խորհրդատվությունը կարող է օգնել ծնողներին հասկանալ իրենց երեխայի կարիքները և ձեռք բերել հմտություններ երեխայի IEP-ի կատարմանն աջակցելու համար:

**Դպրոցի աշխատակազմի և (կամ) հասակակիցների ուսուցում:** Դպրոցի անձնակազմին կարելի է ծանոթացնել հալածանքի վերաբերյալ դպրոցի քաղաքականությանն ու կիրառվող ընթացակարգերին:

Այս ցանկը չի ներառում հալածանքի վերացմանն ուղղված բոլոր ձևերը: Ինչպես IEP-ի բոլոր ասպեկտները, նպատակները, հարմարությունները և ծառայությունները պետք է մշակվեն երեխայի յուրահատուկ կարիքներին համապատասխան:

#### **4. Որո՞նք են դպրոցական շրջանի՝ դպրոցում հալածանքի և հետապնդման վերացմանն ուղղված պարտավորությունները**

##### **a. Հետապնդում**

Երբ դպրոցը գիտի կամ պետք է գիտենար, որ աշակերտների միջև հետապնդում է տեղի է ունեցել, պետք է տեղի ունեցածը քննելու համար անհապաղ և պատշաճ գործողություններ ձեռնարկի:<sup>20</sup> Եթե հետապնդում է տեղի ունեցել, դպրոցը պետք է կատարի արագ և օգտակար քայլեր՝ փորձելու դադարեցնել հետապնդումը և կանխելու դրա կրկնվելը:<sup>21</sup>

##### **b. Կարգապահություն**

Կալիֆորնիայում դպրոցական շրջանը կարող է ժամանակավորապես կամ ընդմիջտ հեռացնել աշակերտին դպրոցից, եթե նա ներգրավվում է հալածանքի, այդ թվում՝

---

<sup>20</sup> Dear Colleague Letter, October 26, 2010, հղում՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201010.html>:

<sup>21</sup> Dear Colleague Letter, October 26, 2010, հղում՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201010.html>:



կիբերհալածանքի գործողություններում:<sup>22</sup>

Ժամանակավորապես կամ ընդմիջտ կարող են հեռացվել չորրորդից տասներկուերորդ դասարանների աշակերտները: Սա կարող է տեղի ունենալ այն դեպքում, եթե կառավարիչը կամ տնօրենը գտնեն, որ աշակերտը միտումնավոր մասնակցել է հալածանքի, սպառնանքի կամ ահաբեկման գործողություններին: Այդ արարքը պետք է այնքան լուրջ բնույթ կրի, որ բացասաբար ազդի դասարանի աշխատանքի վրա և ստեղծի անբարյալացական միջավայր:<sup>23</sup>

### **Կ. Հալածանքի դեմ պայքարի քաղաքականություն**

Նահանգային օրենսդրությամբ դպրոցները պետք է ունենան դպրոցում խտրականության և հալածանքի դեմ պայքարի քաղաքականություններ: Դա վերաբերում է այնպիսի հալածանքին կամ հետապնդմանը, որը հիմնվում է անձի գոյություն ունեցող բնորոշիչ հատկանիշների կամ այն հատկանիշների վրա, որոնք ենթադրաբար ունի անձը՝ ներառյալ հաշմանդամությունը:<sup>24</sup> Դպրոցական շրջանները պետք է նաև ունենան բողոքները քննելու գործընթաց:<sup>25</sup> Բողոքները քննելու գործընթացը պետք է ներառի բողոքները քննելու և դրանց լուծում տալու ժամանակացույց: Այն պետք է ունենա նաև բողոքարկման գործընթաց այն դեպքերի համար, երբ ծնողները համաձայն չեն դպրոցական շրջանի՝ բողոքին լուծում տալու որոշման հետ:<sup>26</sup>

Դպրոցական շրջանները պետք է ապահովեն, որ դպրոցում տեղի ունեցող խտրականության, հետապնդման, ահաբեկման և հալածանքի դեպքերի մասին հաղորդող մարդիկ լինեն պաշտպանված, և որ նրանց ինքնությունը չբացահայտվի:<sup>27</sup> Նրանք դպրոցի աշխատակիցներից պետք է պահանջեն նաև քայլեր ձեռնարկել՝ անմիջապես օգնելու համար: Եթե դպրոցի աշխատակիցը խտրականության, հետապնդման, ահաբեկման կամ հալածանքի գործողություն է տեսնում, պետք է օգնի, եթե այդպես անելը վտանգ չի ներկայացնում:<sup>28</sup>

<sup>22</sup> Cal. Ed. Code Section 48900(r).

<sup>23</sup> Cal. Ed. Code Section 48900.4.

<sup>24</sup> Cal. Ed. Code Sections 234-234.5.

<sup>25</sup> Cal. Ed. Code Section 234.1(b).

<sup>26</sup> Cal. Ed. Code Sections 234.1(b)(2)-(3).

<sup>27</sup> Cal. Ed. Code Section 234.1(g).

<sup>28</sup> Cal. Ed. Code Section 234.1(b)(1).

Կարող եք պահանջել, որ ձեզ տրամադրվեն ձեր դպրոցի շրջանի խտրականության, հետապնդման, ահաբեկման և հալածանքի դեմ պայքարի քաղաքականության և բողոքների քննման գործընթացի պատճենները: Ձեր դպրոցի շրջանի քաղաքականությունը և բողոքների քննման գործընթացը գուցե հասանելի լինի նրանց կայքում: Եթե ձեր հիմնական լեզուն անգլերենը չէ, բողոքների քննման գործընթացը պետք է թարգմանվի:<sup>29</sup>

## **5. Ինչպե՞ս կարող եք օգնություն ստանալ, երբ դպրոցի շրջանը հաշմանդամություն ունեցող աշակերտին չի պաշտպանում հալածանքից ու հետապնդումից**

Եթե դպրոցի շրջանը հաշմանդամություն ունեցող աշակերտին չի պաշտպանում հալածանքից ու հետապնդումից, ծնողները կարող են բողոք ներկայացնել դպրոցի շրջանին Բողոքների ներկայացման միասնական կարգի (անգլ. Uniform Complaint Procedures, UCP) համաձայն: Բողոքների ներկայացման միասնական կարգը որոնեք դպրոցի շրջանի կայքում կամ դպրոցի շրջանի գրասենյակին խնդրեք տրամադրել դրա պատճենը: Ծնողները կարող են նաև UCP կարգի միջոցով բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Կրթության դեպարտամենտի Կրթության հավասարության վերաբերյալ UCP բողոքարկումների գրասենյակին: Կայքէջն է՝ <http://www.cde.ca.gov/re/cp/uc/>:

Ծնողները կարող են հաշմանդամության խտրականության կասկածների վերաբերյալ բողոք ներկայացնել նաև Միացյալ Նահանգների Կրթության դեպարտամենտի Քաղաքացիական իրավունքների պաշտպանության գրասենյակին: Բողոքը կարող է արտացոլել Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման մասին օրենքի Բաժին 504-ի կամ Հաշմանդամություն ունեցող ԱՄՆ քաղաքացիների իրավունքների պաշտպանության մասին օրենքի Հատված II-ի պահանջների խախտումը: Կայքէջն է՝ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/howto.html>:

Եթե դպրոցի շրջանը չի պահպանում հատուկ կրթության մասին օրենքների պահանջները կամ կարգերը կամ չի կատարում այն, ինչը համաձայնեցվել է երեխայի IEP-ում, ծնողները կարող են Կալիֆորնիայի Կրթության դեպարտամենտին իրավական պահանջների անհամապատասխանության բողոք ներկայացնել:

---

<sup>29</sup> Cal. Ed. Code Section 234.1(b)(4).

Կայքէջն է՝ <https://www.cde.ca.gov/sp/se/qa/cmplntproc.asp>:

Բացի այդ, եթե դպրոցի շրջանի հետ առկա է անհամաձայնություն այն ամենի վերաբերյալ, թե ինչ պետք է ներառվի երեխայի IEP-ում, ծնողները կարող են օրենքով սահմանված կարգով լսումներ պահանջել: Օրենքով սահմանված կարգի և բողոք ներկայացնելու ընթացակարգերի մասին մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել «Չատուկ կրթական իրավունքներ և պարտավորություններ» հրապարակման մեջ, որը հասանելի է առցանց՝ <https://serr.disabilityrightscs.org/>

## 6. Բողոքների նմուշներ

### a. Բողոք դպրոցի տնօրենին (նմուշ)

[Ամսաթիվ]

Ում՝ [Դպրոցի տնօրենի անունը, ազգանունը]

[Դպրոցի անվանումը]

[Դպրոցի հասցեն]

Ումից՝ [Ծնողի անունը, ազգանունը]

[Ծնողի հասցեն՝ ներառյալ փողոցը, քաղաքը, նահանգը և փոստային դասիչը]

Թեմա՝ [Աշակերտի անունը, ազգանունը]

Ուս.տարին [դասարանը]

ԾԱԱ՝ [Աշակերտի ծննդյան ամիսը, ամսաթիվը]

Չարգելի [դպրոցի տնօրենի ազգանունը],

Գրում եմ Ձեզ, որպեսզի տեղեկացնեմ, որ իմ երեխան [աշակերտի անունը, ազգանունը] դպրոցում ենթարկվել է հալածանքի և հետապնդման: Իմ երեխան հաշմանդամություն ունեցող աշակերտ է: Իմ երեխայի հաշմանդամությունը հետևյալն է՝ [նկարագրել

*հաշմանդամությունը*]: Ես կարծում եմ, որ այդ հետապնդման հիմքում ընկած է նրա հաշմանդամությունը:

Նրան հետապնդել է *[հետապնդող(ներ)ի անունը]*: Դա տեղի է ունեցել *[ամսաթիվը կամ մոտավոր ժամանակահատվածը]*, երբ *[հնարավորինս մանրամասն նկարագրեք միջադեպ(եր)ը]*:

Դա տեղի ունեցավ *[վկա(ներ)ի անունը]* ակնատես է/են եղել դրան և *[նրանց արձագանքը]*: Այս միջադեպ(եր)ի մասին իմ երեխան խոսել է *[դպրոցի անձնակազմի անդամների անունները]* հետ *[ամսաթիվը կամ մոտավոր ժամանակահատվածը]*: Նրանք արձագանքել հետևյալ կերպ. *[նկարագրեք դպրոցի անձնակազմի անդամների արձագանքը]*: Այս միջադեպ(եր)ի մասին ես տեղեկացել եմ, երբ *[նկարագրեք, թե ինչպես են ձեզ տեղեկացրել]*:

Հավաճանքի և հետապնդման այս միջադեպերը խոչընդոտել են իմ երեխայի կրթություն ստանալու կարողությանը և ունեցել են հետևյալ բացասական հետևանքները.

*[նկարագրեք ազդեցությունները, այդ թվում՝ ֆիզիկական վնասվածքները/հոլզական վնասները կամ ազդեցությունները, բժշկական/հոգեբանական թերապիայի անհրաժեշտությունը և ազդեցությունը ուսումնասռության կամ դպրոցական պարապմունքների ու միջոցառումների հաճախելիության, մասնակցության և առաջադիմության վրա]*:

Ինչպես գիտեք, իմ երեխան հաշմանդամություն ունեցող աշակերտ է, որն ունի (IEP)/504 անհատականացված կրթական պլանը *[ընտրեք, եթե համապատասխանում է]*: Դաշնային և նահանգային օրենսդրությունը պաշտպանում է հաշմանդամություն ունեցող աշակերտների այն իրավունքները, որոնք թույլ են տալիս զերծ լինել հաշմանդամության հիմքով հավաճանքից և հետապնդումից, որոնք խոչընդոտում կամ զրկում են կրթություն ստանալու կամ կրթությունից օգուտ ստանալու հնարավորությունից: Ավելին, Կալիֆորնիայի օրենսդրությամբ պահանջվում է, որ դպրոցական շրջաններն ընդունեն խտրականությունը, հետապնդումը և հավաճանքն արգելող քաղաքականություններ, խտրականության, հետապնդման և հավաճանքի դեպքերի վերաբերյալ բողոքներ ստանալու և դրանք քննելու համար մշակեն բողոքների ներկայացման գործընթաց և այդ քաղաքականությունը տրամադրեն ծնողներին և աշակերտներին:

Ես դիմում եմ դպրոցական շրջանի՝ հավաճանքի ու հետապնդման

մասին քաղաքականության պատճենն ստանալու խնդրանքով: Ես պահանջում եմ, որպեսզի քննեք խնդիրը և հնարավորինս շուտ լուծեք այն: Խնդրում եմ գրավոր հայտնեք ինձ ձեր կողմից իրականացված քննության արդյունքների և այն մասին, թե ինչ քայլեր եք ձեռնարկել այս խնդիրը լուծելու ուղղությամբ, ինչպես նաև հավաստիանալու, որ այսպիսի միջադեպեր ապագայում տեղի չեն ունենա:

Ես նաև կցանկանայի դիմել հնարավորինս շուտ IEP/504 պլանի [ընտրել մեկը, եթե կիրառելի է] հանդիպում անցկացնելու խնդրանքով՝ այս խնդրի լուծման կապակցությամբ հնարավոր հարմարությունների, ծառայությունների և (կամ) աջակցությունների ապահովումը քննարկելու համար:

Շնորհակալություն այս հարցին արագ ուշադրություն դարձնելու համար:

[Ճնողի ստորագրությունը]

[Ամսաթիվ]

**b. Բողոք Կալիֆորնիայի Կրթության  
դեպարտամենտին (նմուշ)**

[Ամսաթիվ]

Ում՝ California Department of Education  
Sharon Felix-Rochon, Director of Office of Equal Opportunity  
1430 N Street, Suite 4206  
Sacramento, CA 95814

Ումից՝ [Ճնողի անունը, ազգանունը]  
[Ճնողի հասցեն՝ ներառյալ փողոցը, քաղաքը, նահանգը և  
փոստային դասիչը]

Հարգելի տիկին Ֆելիքս-

Ռոչոն,

Գրում եմ Ձեզ [դպրոցի շրջանի անվանումը] դեմ բողոք  
ներկայացնելու համար, քանի որ զգում եմ, որ իմ երեխան՝  
[աշակերտի անունը, ազգանունը], անօրինական ձևով ենթարկվել է

խտրականության իր հաշմանդամության հիմքով:

[Աշակերտի անունը, ազգանունը] սովորում է [դպրոցի անվանումը] դպրոցի [դասարանը] դասարանում: Նա հաշմանդամություն ունեցող աշակերտ է, նա ունի հետևյալ հաշմանդամությունը՝ [նշել հաշմանդամությունը]: Նա ունի IEP/504 պլանը [ընտրել, եթե կիրառելի է]:

[Աշակերտի անունը, ազգանունը] իր հաշմանդամության պատճառով դպրոցում ենթարկվել է հալածանքի և հետապնդման: Դա տեղի է ունեցել [ամսաթիվը կամ մոտավոր ժամանակահատվածը], երբ [հնարավորինս մանրամասն նկարագրեք միջադեպ(եր)ը]:

Դա տեղի ունեցավ [վկա(ներ)ի անունը] լսել կամ տեսել է/են դա և [նրանց արձագանքը]: Այս միջադեպերի մասին իմ երեխան [ամսաթիվը կամ մոտավոր ժամանակահատվածը] խոսել է [դպրոցի անձնակազմի անդամների անուն(ներ)ը և պաշտոնները] հետ, և նրանց արձագանքը եղել է [նկարագրեք դպրոցի անձնակազմի անդամների արձագանքը]: Այս միջադեպի մասին ես տեղեկացել եմ, երբ [նկարագրեք, թե ինչպես են ձեզ տեղեկացրել]:

Կարծում եմ, որ հետապնդման այս արարքի հիմքում ընկած է հաշմանդամությունը, քանի որ [նկարագրեք հետապնդման և աշակերտի հաշմանդամության միջև եղած կապը]:

Հաշմանդամության վրա հիմնված այս հետապնդումն ստեղծել է անբարյալացական միջավայր, ինչը խոչընդոտել է իմ երեխայի կրթությունն ստանալու կարողությանը և ունեցել է հետևյալ բացասական հետևանքները. [նկարագրեք ազդեցությունները, այդ թվում՝ ֆիզիկական վնասվածքները/հոլզական վնասները կամ ազդեցությունները, բժշկական/հոգեբանական թերապիայի անհրաժեշտությունը և ազդեցությունը ուսումնառության կամ դպրոցական պարապմունքների ու միջոցառումների հաճախելիության, մասնակցության և առաջադիմության վրա]:

[Կարող եք բողոք ներկայացնել անմիջապես CDE-ին, սակայն եթե արդեն բողոք եք ներկայացրել դպրոցի շրջանին, ապա ներառեք հետևյալ պարբերությունը]: [Դպրոցական շրջանին Ձեր ուղարկած նամակի ամսաթիվը] ամսաթվին ես գրավոր բողոք եմ ներկայացրել դպրոցի շրջանին և պահանջել եմ հնարավորինս արագ քննել հարցը և լուծում տալ դրան: Դպրոցի շրջանը պատասխանել է

հետևյալը. *[Նկարագրեք դպրոցի շրջանի պատասխանը]:* Կարծում եմ, նրանք չեն կատարել իմ երեխային հաշմանդամության հիմքով խտրականությունից և հետապնդումից պաշտպանելու իրենց պարտավորությունը, քանի որ *[Նկարագրեք, թե նրանց արձագանքն ինչու համապատասխան կերպով չի վերացրել հաշմանդամության հետապնդումը]:*

Հաշմանդամությունն ունեցող անձանց վերականգնման մասին օրենքի Բաժին 504-ը, Հաշմանդամությունն ունեցող ԱՄՆ քաղաքացիների իրավունքների պաշտպանության մասին օրենքի Հատված II-ը և Կալիֆորնիայի կրթության մասին օրենսգրքի Բաժիններ 200-ը, 201-ը, 220-ը, 234-ը և 234.1-ը պաշտպանում են հաշմանդամությունն ունեցող աշակերտների իրավունքները, որոնք թույլ են տալիս գերծ լինել հաշմանդամության հիմքով խտրականությունից և հետապնդումից, ինչը խոչընդոտում կամ զրկում է նրանց կրթություն ստանալու կամ կրթությունից օգուտ ստանալու հնարավորությունից:

Ավելին, Հաշմանդամությունն ունեցող անձանց կրթության ապահովման մասին օրենքի և 1973թ. ընդունված Հաշմանդամությունն ունեցող անձանց վերականգնման մասին օրենքի Բաժին 504-ի համաձայն հաշմանդամության հետապնդումը կարող է խոչընդոտել դպրոցի շրջանի կողմից անվճար և պատշաճ հանրային կրթության ապահովումը:

Այս բողոքի բովանդակությունը կազմող հարցը լուծելու համար խնդրում եմ իրականացնել հետևյալ մեղմիչ միջոցառումները. *[Նկարագրեք, թե ինչ կցանկանայիք, որ դպրոցի շրջանն աներ ձեր բողոքի արդյունքում, այսինքն՝ իրականացնել աշակերտի խորհրդատվություն, մատուցել ծառայություններ, անձնակազմին/աշակերտներին տրամադրել ուսուցում խտրականության և հաշմանդամության հիմքով հալածանքի թեմայով, կատարել փոփոխություններ դպրոցի շրջանի քաղաքականություններում և այլն]:*

Կից ներկայացնում եմ *[Նշեք բոլոր կարևոր փաստաթղթերը/ապացույցները՝ ներառյալ նամակներն ու այլ հաղորդակցումը, որոշումները և այլն]:*

Այս բողոքի վերաբերյալ կարող եք կապվել ինձ հետ: Շնորհակալություն այս հարցին արագ ուշադրություն դարձնելու համար:

Հարգանքով՝

[Ստորագրություն]

[Ամսաթիվ]

**Կ. Բողոք հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան աշակերտի ծնողից՝ Քաղաքացու իրավունքների պաշտպանության գրասենյակին (սմու2)<sup>30</sup>**

[Ամսաթիվ]

Ում՝ Office for Civil Rights, San Francisco Office  
U.S. Department of Education  
50 United Nations Plaza  
San Francisco, CA 94102

Ումից՝ [Ծնողի անունը, ազգանունը]  
[Ծնողի հասցեն՝ ներառյալ փողոցը, քաղաքը, նահանգը և փոստային դասիչը]  
[Ծնողի հեռախոսահամարը]  
[Ծնողի էլեկտրոնային հասցեն]

Հարգելի տիկին կամ պարոն,

Գրում եմ Ձեզ [դպրոցի շրջանի անվանումը] դեմ բողոք ներկայացնելու համար, քանի որ զգում եմ, որ իմ երեխան՝ [աշակերտի անունը, ազգանունը], անօրինական ձևով ենթարկվել է խտրականության իր հաշմանդամության հիմքով: [Դպրոցի շրջանի անվանումը] գտնվում է՝ [դպրոցի շրջանի հասցեն՝ ներառյալ փողոցը, քաղաքը, նահանգը և փոստային դասիչը]:

---

<sup>30</sup> Եթե անձը, որի նկատմամբ խտրականություն է կիրառվել, 18 տարեկան է կամ ավելի բարձր տարիքի է, պետք է ստորագրի բողոքը և լրացնի Քաղաքացու իրավունքների պաշտպանության գրասենյակի համաձայնության/բողոքի ներկայացման թույլտվության ձևը, որոնք հասանելի են հետևյալ կայքում՝

<https://www2.ed.gov/about/offices/list/ocr/complaintform.pdf>



[Աշակերտի անունը, ազգանունը] սովորում է [դպրոցի անվանումը] դպրոցի [դասարանը] դասարանում: Նա հաշմանդամություն ունեցող աշակերտ է, նա ունի հետևյալ հաշմանդամությունը՝ [նշել հաշմանդամությունը]: Նա ունի IEP/504 պլանը [ընտրել, եթե կիրառելի է]:

[Աշակերտի անունը, ազգանունը] իր հաշմանդամության պատճառով դպրոցում ենթարկվել է հալածանքի և հետապնդման: Դա տեղի է ունեցել [ամսաթիվը կամ մոտավոր ժամանակահատվածը], երբ [հնարավորինս մանրամասն նկարագրեք միջադեպ(եր)ը]:

Դա տեղի ունենալիս [վկա(ներ)ի անունը] լսել կամ տեսել է/են դա և [նրանց արձագանքը]: Այս միջադեպերի մասին իմ երեխան [ամսաթիվը կամ մոտավոր ժամանակահատվածը] խոսել է [դպրոցի անձնակազմի անդամների անուն(ներ)ը և պաշտոնները] հետ, և նրանց արձագանքը եղել է [նկարագրեք դպրոցի անձնակազմի անդամների արձագանքը]: Այս միջադեպի մասին ես տեղեկացել եմ, երբ [նկարագրեք, թե ինչպես են ձեզ տեղեկացրել]: Կարծում եմ, որ [աշակերտի անունը, ազգանունը] վերջին անգամ խտրականության ենթարկվել [ամսաթիվը կամ մոտավոր ժամանակահատվածը] ամսաթվին [եթե խտրականությունը տեղի է ունեցել ավելի քան 180 օր առաջ, ապա պետք է բացատրեք, թե բողոք ներկայացնելու համար ինչու եք սպասել մինչև հիմա]:

Կարծում եմ, որ հետապնդման այս արարքի հիմքում ընկած է հաշմանդամությունը, քանի որ [նկարագրեք հետապնդման և աշակերտի հաշմանդամության միջև կապը]:

Հաշմանդամության վրա հիմնված այս հետապնդումն ստեղծել է անբարյալացական միջավայր, ինչը խոչընդոտել է իմ երեխայի կրթություն ստանալու կարողությանը և ունեցել է հետևյալ բացասական հետևանքները. [նկարագրեք ազդեցությունները, այդ թվում՝ ֆիզիկական վնասվածքները/հոլզական վնասները կամ ազդեցությունները, բժշկական/հոգեբանական թերապիայի անհրաժեշտությունը և ազդեցությունը ուսումնասիրության կամ դպրոցական պարապմունքների ու միջոցառումների հաճախելիության, մասնակցության և առաջադիմության վրա]:

[Նշեք ամսաթիվը, որին ուղարկել եք նամակ դպրոցի շրջանին] ամսաթվին ես դպրոցի շրջանին գրավոր բողոք եմ ներկայացրել և պահանջել եմ հնարավորինս շուտ քննել ու լուծել բողոքին առնչվող

հարցը: Դպրոցի շրջանը պատասխանել է հետևյալը. *[Նկարագրեք դպրոցի շրջանի պատասխանը]:* Կարծում եմ, նրանք չեն կատարել իմ երեխային հաշմանդամության հիմքով խտրականությունից և հետապնդումից պաշտպանելու իրենց պարտավորությունը, քանի որ *[Նկարագրեք, թե նրանց արձագանքն ինչու համապատասխան կերպով չի վերացրել հաշմանդամության հետապնդումը]:* *[Եթե ունեք դպրոցի շրջանի պատասխանի կրկնօրինակը, այն կցեք ձեր նամակին]:* *[Եթե բողոք եք ներկայացրել որևէ այլ գործակալության կամ դատարանին, նշեք բողոքը ներկայացնելու ամսաթիվը, գործի համարը և այդ բողոքի արդյունքները]:*

1973թ. ընդունված Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման մասին օրենքի Բաժին 504-ը և 1990թ. ընդունված Հաշմանդամություն ունեցող ԱՄՆ քաղաքացիների իրավունքների պաշտպանության մասին օրենքի Հատված II-ը պաշտպանում են հաշմանդամություն ունեցող աշակերտների այն իրավունքները, որոնք թույլ են տալիս նրանց զերծ լինել հաշմանդամության հիմքով խտրականությունից և հետապնդումից, ինչը խոչընդոտում կամ զրկում է նրանց կրթություն ստանալու կամ կրթությունից օգուտ ստանալու հնարավորությունից: Ավելին, Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության ապահովման մասին օրենքի և 1973թ. ընդունված Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման մասին օրենքի Բաժին 504-ի համաձայն հաշմանդամության հետապնդումը կարող է խոչընդոտել դպրոցի շրջանի կողմից անվճար և պատշաճ հանրային կրթության ապահովումը:

Այս բողոքի բովանդակությունը կազմող հարցը լուծելու համար խնդրում եմ իրականացնել հետևյալ մեղմիչ միջոցառումները. *[Նկարագրեք, թե ինչ կցանկանայիք, որ դպրոցի շրջանն աներ ձեր բողոքի արդյունքում, այսինքն՝ իրականացներ աշակերտի խորհրդատվություն, մատուցեր ծառայություններ, անձնակազմին/աշակերտներին տրամադրեր ուսուցում խտրականության և հաշմանդամության հիմքով հալածանքի թեմայով, կատարեր փոփոխություններ դպրոցի շրջանի քաղաքականություններում և այլն]:*

Կից ներկայացնում եմ *[նշեք բոլոր կարևոր փաստաթղթերը/ապացույցները՝ ներառյալ նամակներն ու այլ հաղորդակցումը, բողոքները, որոշումները և այլն]:*

Այս բողոքի վերաբերյալ կարող եք կապվել ինձ հետ: Շնորհակալություն

այս հարցին արագ ուշադրություն դարձնելու համար:

Չարգանքով՝

[Ստորագրություն]

[Անսաթիվ]